ՋՈՀԱՍԵՂԱՆԻ ԿՐԱԿԸ

ԲԱՆԱԼԻ ԽՈՍՔ. ՂԵՎՏԱՑՈՑ 6.12, 9.23-24

*Ղև. 6.12 – 12 **Զոհասեղանի** վրա **կրակը միշտ** վառած պիտի մնա, չպիտի հանգչի: **Ամեն առավոտ** քահանան դրա վրա փայտ պիտի վառի, դրա վրա շարի ողջակեզը և դրա վրա այրի խաղաղության զոհերի ճարպը: 13 Կրակը միշտ վառած պիտի մնա զոհասեղանի վրա, չպիտի հանգչի:*

*Ղև. 9.23-24 – 23 Մովսեսն ու Ահարոնը մտան ժողովի վրանը և դուրս գալով՝ օրհնեցին ժողովրդին: Եվ Տիրոջ փառքը երևաց ամբողջ ժողովրդին: 24 Տիրոջ առջևից կրակ դուրս եկավ և **այրեց** զոհասեղանի վրայի ողջակեզն ու ճարպերը, և ամբողջ ժողովուրդը, տեսնելով այդ, աղաղակեց և ընկավ երեսի վրա:*

Ղուկաս 12.49 – Ես եկա որ կրակ գցեմ երկրիս վրա. եւ ի՞նչքան եմ կամենում, որ արդէն իսկ բորբոքուած լինի:

Գ Թագավորաց 18.38 – Եվ Տիրոջ կրակն իջավ դեպի ցած, կլանեց ողջակեզը, փայտերը, քարերը, հողը և փոսի միջի ջուրն էլ լափեց:

13 Կրակը միշտ վառած պիտի մնա զոհասեղանի վրա, չպիտի հանգչի:

Թես. 5.19 – Սուրբ Հոգու կրակը մի՛ մարեք:

Ինչպես զոհասեղանի կրակը պետք է անընդհատ վառ մնար, այնպես էլ աղոթքի և Սուրբ Հոգու կրակը պետք է միշտ վառ մնա մեր սրտերում, մեր տներում և մեր ընտանիքներում:

I. ԱՂՈԹՔԸ ՊԵՏՔ Է ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆ ԼԻՆԻ

*Ա Թագավորաց 12.23 – Բայց ես, քա՛վ լիցի, որ **մեղք** գործեմ Տիրոջ դեմ՝ դադարելով ձեզ համար աղոթք անելուց, այլ ես ձեզ կսովորեցնեմ բարի և ուղիղ ճանապարհը:*

Սամվել մարգարեն ասես ասում էր. «Ես չեմ դադարի զոհասեղանի կրակի վրա փայտ դնելուց»:

Նա հասկանում էր, որ աղոթքը պետք է շարունակական լինի: Ինչպես զոհասեղանի կրակը չէր կարելի հանգցնել, այնպես էլ Աստծո ժողովրդի համար բարեխոսության կրակը չպետք է մարի:

II. ՊԵՏՔ Է <u>ԺԱՄԱՆԱԿ</u> ԼԻՆԻ ԱՂՈԹՔԻ ՀԱՄԱՐ

*Ղև. 6.13 – **Ամեն առավոտ** քահանան դրա վրա փայտ պիտի վառի, դրա վրա շարի ողջակեզը...*

*Ծննդոց 3.8 – Եվ Տեր Աստծու ձայնը լսեցին, որ ման էր գալիս պարտեզում օրվա **զով ժամին**: 9 Ադամ Ո՞ւր ես:*

*Հոբ 1.5 – Հոբը **առավոտվանից** վեր էր կենում և նրանց բոլորի թվով ողջակեզներ էր մատուցում, որովհետև Հոբն*

ասում էր. Գուցե որդիներս մեղանչել են ու Աստծուն իրենց սրտում հայհոյել: Հոբն ամեն անգամ այդպես էր անում:

Ինչո՞ւ է ժամանակը կարևոր աղոթքի համար:

Աստվածաշնչի մեծագույն հրաշքներից շատերը տեղի ունեցան աղոթքի ժամերին՝ երրորդ ժամին (առավոտյան 9-ին) կամ իններորդ ժամին (երեկոյան 3-ին):

*Դանիել 9.21– և մինչ ես աղոթում էի ...**երեկոյան զոհի ժամանակ** հասավ ինձ:*

Պենտեկոստեի օրը, երբ Սուրբ Հոգին իջավ

Գործք Առաքելոց 2.15 – օրվա երրորդ ժամն է...

Գործք Առաքելոց 3.1– Պետրոսն ու Հովհաննեսը բարձրանում էին տաճար՝ իններորդ ժամի աղոթքի համար:

Կոռնելիոսի տան փրկությունը

Գործք Առաքելոց 10.3 – Օրվա իններորդ ժամին մոտ նա տեսիլքի մեջ հայտնապես տեսավ Աստծու հրեշտակին, որը, մտնելով իր մոտ, ասաց. Կոռնելիո՛ս:

Գործք Առաքելոց 10.9 – Հաջորդ օրը, երբ նրանք ճանապարհին էին ու մոտենում էին քաղաքին,

Պետրոսը վեցերորդ ժամին մոտ բարձրացավ տանիք՝ աղոթելու:

Հաստատված աղոթքի ժամանակը փոխում է ամեն ինչ:

III. ՊԵՏՔ Է ԸՆՏՐԵՍ ԱՂՈԹՔԻ ՎԱՅՐԸ

Մի տեղ, որտեղ ամեն օր կհանդիպես Աստծուն: Մի տեղ, որտեղ կթափես սիրտդ, կլսես Նրա ձայնը և կվառես Սուրբ Հոգու կրակը:

*Մարկոս 1.35 – Վաղ առավոտյան՝ լույսը դեռ չբացված, վեր կացավ, դուրս եկավ, **մի ամայի տեղ գնաց** ու այնտեղ աղոթում էր:*

*Ղուկաս 5.16 – Իսկ նա հեռանում էր **ամայի տեղեր** և աղոթում:*

*Ղուկաս 6.12-13 – Այդ օրերին Հիսուսը **լեռը ելավ աղոթելու** և ամբողջ գիշերն անցկացրեց Աստծուն աղոթելով:*

Հովհ. 1.48 – Նաթանայելը աղոթում էր թզենու տակ:

Գործք 10.9 – Պետրոսը բարձրացավ տանիք՝ աղոթելու:

Գործք 16.13 – Պողոսն ու Շիղան գնացին գետի ափը, որտեղ սովորություն կար աղոթելու:

IV.ԱՂՈԹԻՐ ԲԱՐՁՐԱՁԱՅՆ

*Եբր. 5.7 – Հիսուս, ով իր երկրային օրերին ուժգին **աղաղակով** ու արտասուքով աղոթք ու աղաչանք էր մատուցում Հորը...*

*Գործք 4.24, 31 – **24** Նրանք, այս լսելով, միաբանված իրենց **ձայնն առ Աստված բարձրացրին** ու ասացին. Տե՛ր Աստված, դու, որ ստեղծեցիր երկինքն ու երկիրը, ծովն ու նրա մեջ եղած ամեն բան... **31** Նրանց աղոթելուց հետո շարժվեց այն տեղը, որտեղ հավաքված էին, և բոլորը լցվեցին Սուրբ Հոգով...*

Յուրաքանչյուր երկու ամուսնություններից մեկը ավարտվում է ամուսնալուծությամբ. դա գրեթե 50% է, և ցավոք, դա վերաբերում է նաև եկեղեցուն:

Սակայն ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այն զույգերը, որոնք միասին հետևողականորեն աղոթում են, ունեն ամուսնալուծության չափազանց ցածր հավանականություն. հաճախ նշվում է, որ միայն 2000 ամուսնությունից 1-ն է ավարտվում ամուսնալուծությամբ:

Աղոթքը Աստծուն դնում է ամուսնության կենտրոնում: Երբ ամուսինն ու կինը միասին ծնկի են գալիս Աստծո առաջ, նրանց սրտերը մոտենում են ոչ միայն Աստծուն, այլ նաև միմյանց:

ԻՆՉ Է ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԱՍՈՒՄ ԻՆՁ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ: